ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ (CQS)
Հետաքրքրվածության արտահայտման հրավեր

08 հոկտեմբերի 2024թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
Առաջադրանքի անվանումը՝ ՀՀ Տավուշի մարզի Սևքարի միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **ATS-27**
Վերջնաժամկետ՝ 2024թ. հոկտեմբեր 22-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Պատվիրատու) նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ տեղական խորհրդատուներին՝ ստորև բերվող աշխատանքների կատարման նպատակով:

<u>Առաջադրանքի նպատակն է՝</u>

Նախկին դպրոցի տարածքում նախատեսվում է կառուցել նոր, երկհարկանի, նկուղային հարկով, հատակագծում ուղղանկյուն 91.5*35.5մ չափերով կառույց, սեյսմիկ կարանով բաժանված հավասար հատվածամասերի: Նկուղում նախատեսվում է ժամանակավոր թաքստոց: Կառույցը երկաթբետոնե միաձույլ, շրջանակա-կապային հիմնակմախքով, խաչահատվող ժապավենային հիմնահեծաններով, դիաֆրագմաներով և ծածկերով: Բոլոր կոնստրուկցիաները նախագծված են B25 դասի բետոնից և A500c դասի ամրաններից: Տանիքը՝ թեք երկաթբետոնե ծածկի վրայով: 1-5 դասարանների և նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցումը նախատեսվում է 1-ին հարկում, բարձր դասարանի աշակերտների ուսուցումը՝ 2-րդ հարկում: Շենքում նախատեսվում են 4 աստիճանավանդակներ, 1 վերելակ: Շենքի տանիքում նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում 232 վահանակներով: Դպրոցի ջեռուցումը իրականացվելու է կաթսայատնից, որը շահագործվելու է բնական գազով: Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը՝ 596մ2, 1-2-րդ հարկերինը՝ 5957մ2: Հենաշարժողական խնդիրներ ունեցող, սայլակով տեղաշարժվող երեխաների համար նախատեսված են սանհանգույցներ, թեքահարթակ և ամբարձիչ: Իրականացվելու է դպրոցի տարածքի ցանկապատում և բարեկարգում, մարզադաշտի և մարզահրապարակի կառուցում: Կապալառուն պետք է տեղակապի Սասունիկի միջնակարգ դպրոցի նախագիծը Սևքարում:

Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. N44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի հիման վրա: Տեխնիկական հսկողության հիմնական խնդիրներն են՝ ապահովել շինվերանորոգման աշխատանքների պահանջվող որակը, նրանց համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին, գործող նորմերին, ստանդարտներին և շինարարության մասին օրենքներին, ինչպես նաև երաշխավորել բնապահպանական խնդիրների ներկայացվող պահանջների ապահովումը:

1. Շինարարության տեխնիկական հսկողությունը իրականացվում է սկսած ծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի օրից մինչև ավարտված ծրագրի ընդունման ակտի վավերացումը:
2. Իրականացվում է շինարարական աշխատանքների ամենօրյա հսկողություն, որը հաստատվում է տեխնիկական հսկողության մատյանում գրառումների կատարման միջոցով:

3. Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, չափագրումներով, որոնց ընթացքում պարզվում է կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, շինարարական նորմերին և կանոններին:

4. Խորհրդատուն ապահովում է կատարված աշխատանքների, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների, իրերի որակը, ինչպես նաև աշխատանքների կատարման տեխնոլոգիական պահանջներն, ներառյալ բնապահպանական և սոցիալական պահանջները ըստ գործող նորմերի և պետական ստանդարտների: Բոլոր հարդարման նյութերը և իրերը նախապես համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

<u>Խորհրդատուի աշխատանքների շրջանակները հետևյալն են՝</u>

1. Մասնակցել շենքերի և շինությունների առանցքների նշահարմանը, շինարարության ընթացքում կատարել նիշերի գեոդեզիական ստուգիչ չափագրումներ և կազմել այդ չափագրումների վերաբերյալ համապատասխան ակտեր:

2. Ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին:

3. Ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը, այդ փաստաթղթերում բերված տեխնիկական տվյալների համապատասխանությունը նախագծով, նորմերով կամ համապատասխան տեխնիկական փաստաթղթերով նախատեսված պահանջներին:

4. Տեխնիկական հսկողության մատյանում նշի նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան գրառումները,

5. Մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը,

6. Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:

7. Ստորագրել սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարական օբյեկտների ընդունման ակտը և նրանց հանձնումը Պատվիրատուին:

8. Հետևել, որ կապալառուի կողմից իրականացվող շինարարական աշխատանքները համապատասխանեն անվտանգության նորմերին ու կանոններին:

9. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:

10. Վարել շինարարության ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցել օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և որակը:

11. Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար:

12. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը:

13. Նշված ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները:

14. Պատվիրատուին ներկայացնել ամսեկան հաշվետվություն, ներառյալ բնապահպանական և սոցիալական հարցերի մասին հաշվետվությունը:

15. Շենքերի և կառույցների կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների, ինչպես նաև ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքների պահանջների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:

16. Խորհրդատուն պետք է ապահովի, որպեսզի Պատվիրատուն իրազեկված լինի շինարարության ընթացքում ցանկացած չնախատեսված հողօգտագործման մասին:

Շինարարության տևողությունը նախատեսվում է՝ 760 օր:

Խորհրդատուների որակավորման չափանիշներն են՝

Խորհրդատու կազմակերպությունը պետք է ունենա տեխնիկական հսկողության իրականացման առնվազն 10 տարվա փորձ, ընդորում փորձառությունը պետք է բավարարի հետևյալ պայմաններին.

- Կազմակերպության ընդհանուր փորձառությունը՝ քաղաքացիական շենքերի կառուցման և վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման փորձ՝ յուրաքանչյուրը առնվազն 1,000,000,0 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով,
- Միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքի՝ կանգնակների, պարզունակների, հեծանների, ծածկերի, պատերի և այլն, իրականացման տեխնիկական հսկողության փորձ /մեկ կառույցում 350 խմ-ից ոչ պակաս/,
- Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար:

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, կազմակերպության ընդհանուր փորձառությունը), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: **Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չի ներկայացնել տվյալ փուլում:** Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Ասիական Զարգացման Բանկի «Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում» (մարտ, 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է) սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) ընթացակարգին համաձայն:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2024թ. հոկտեմբերի 22-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին, 209 սենյակ,
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,
Էլ-փոստը՝ procurement.atdf@gmail.com